

Վարկեր և դրանց հետ կապված պարտա



საქართველოს ეროვნული ბანკი
National Bank of Georgia





Ի՞նչ է վարկը:

Վարկը, նույն կրեդիտը այն գումարն է, որն անձը ստանում է մյուսից պարտքի տեսքով այն պայմանով, որ նա կմարի այդ գումարը նախապես համաձայնեցված ժամկետում և, բացի այդ, կվճարի դրա վրա գոյացած տոկոսները: Վարկի պայմանները գրված են պայմանագրում, որը հաստատվում է վարկատուի և վարկառուի կողմից ֆիզիկական ստորագրությամբ կամ էլեկտրոնային եղանակով (օրինակ՝ առցանց): Վարկեր տրամադրում են ինչպես ֆինանսական հաստատությունները (օրինակ՝ բանկերը և վարկային կազմակերպությունները), այնպես էլ ֆիզիկական անձինք:

Ինչո՞ւ են ֆինանսական

հաստատությունները

վարկեր տալիս:

Ֆինանսական հաստատությունները

վարկեր են տրամադրում այն

պայմանով, որ նրանք կստանան

տրամադրած ընդհանուր գումարից

ավելին: Հավելյալ գումարը, որը

վարկառուն վճարում է ֆինանսական

հաստատությանը, արտահայտվում է

որպես տոկոս և կոչվում է տոկոսադրույք

(համառոտ՝ տոկոս):

Ի՞նչ ռիսկերով ու հնարավորություններով

է ուղեկցվում

վարկ վերցնելը:

Վարկը հնարավորություն է տալիս մեզ

անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ

ստանալ այն ժամանակ, երբ

անհրաժեշտ է, իսկ վերցրած գումարը

մարել ժամանակի ընթացքում փուլ առ

փուլ:

Վարկի միջոցով կարող ենք գնել մեզ

անհրաժեշտ և մեր ուզած իրերը,

ֆինանսավորել մեր կրթությունը, սկսել

կամ զարգացնել բիզնես, ստեղծել

ապագայի համար ավելի շատ

հնարավորություններ և բարելավել մեր

կյանքի որակը: Այնուամենայնիվ, վարկ

վերցնելն ամենապատասխանատու

որոշումներից մեկն է, որը մենք կարող

ենք կայացնել: Այդ պատճառով շատ

կարևոր է նախքան վարկը վերցնելը

ուշադիր համեմատել մեր

ցանկություններն ու

հնարավորությունները, այլ ոչ թե

պարտավորություն ստանձնել, որը չենք

կարողանալու մարել: Վարկը կարող է

ծանր բեռ դառնալ մեր և մեր

ընտանիքների համար, ուստի

անհրաժեշտ է կուրորեն չհետևել

ցանկություններին և մտածել՝ արդյոք

ավելի լավ չի լինի այդ գնման փոխարեն

խնայել վարկի գումարը:

Եթե կորոշեք վարկ վերցնել, անպայման

պետք է նախօրոք հաշվի առնել մի քանի

կարևոր ռիսկեր: Այդպիսի ռիսկերից մեկն

այն է, որ վարկ վերցնողը գուցե

չկարողանա մարել վարկը: Դրա համար

կան մի քանի հնարավոր պատճառներ,

այդ թվում՝

-Վարկառուն կորցրել է եկամտի

աղբյուրը կամ նրա եկամուտը կրճատվել

է, ինչի հետևանքով այլևս չի կարող իրեն

թույլ տալ մարել վարկը,

-Ավելացել են վարկառուի ծախսերը, այդ

թվում՝ և՛ անսպասելի, և՛ պլանավորված

ծախսերը: Անսպասելի ծախսը այն

ծախսն է, որը կապված է

չնախատեսված իրավիճակների հետ,

ինչպիսին է վնասված մեքենայի

վերանորոգման կամ հրդեհից վնասված

տան վերանորոգման ծախսերը:

Պլանավորված ծախսերը ներառում են

հաճախորդի կողմից որոշակի պարբերականությամբ կատարվող կանոնավոր ծախսերը, օրինակ՝ ամսական ինտերնետի վճարները, համալսարանի կիսամյակային ուսման վարձերը և այլն:

Պետք է հաշվի առնել նաև փոխարժեքի տատանումների հետ կապված ռիսկերը, երբ հաճախորդը եկամուտ ունի լարիով և վարկ է վերցնում արտարժույթով, ապա նա պետք է վարկը մարի վարկի արտարժույթով: Եթե լարին արժեզրկվի այդ արտարժույթի նկատմամբ, ապա հաճախորդը ստիպված կլինի ավելի շատ լարի վճարել վարկը մարելու համար անհրաժեշտ արտարժույթ գնելիս, ինչը կվնասի նրա ֆինանսական վիճակը: Այս ռիսկերից խուսափելու համար խորհուրդ է տրվում գումար վերցնել այն արժույթով, որով հաճախորդը եկամուտ է ստանում:

Ի՞նչը հաճախ հաշվի չեն առնում վարկառուները:

Վարկ վերցնելուց առաջ կարևոր է ճիշտ որոշել վարկառուի վճարունակությունը, այսինքն՝ վարկի և մարման չափը, որը նա կարող է իրեն թույլ տալ՝ հաշվի առնելով նրա եկամուտները, ծախսերը և պարտավորությունները՝ իր և իր ընտանիքի անդամների հիմնական կարիքները բավարարելու համար:

և արդյոք այդ գումարը բավարար կլինի վարկը մարելու համար՝ համաձայն վարկի համաձայնեցված ժամանակացույցի, վարկի ամբողջ ժամկետի ընթացքում:

Ի՞նչ և ինչպիսի՞ վարկային պրոդուկտներ գոյություն ունեն:

Կան վարկերի տարբեր տեսակներ, և դուք պետք է ընտրություն կատարեք դրանց միջև՝ կախված նրանից, թե որն է ձեր նպատակը, այսինքն՝ ինչի համար եք գումար վերցնում:

Սպառողական վարկն այն վարկն է, որը տրվում է անձնական օգտագործման կամ որոշակի ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար: Սպառողական վարկերը կարող են օգտագործվել կենցաղային տեխնիկայի, փոքր կենցաղային իրերի, առօրյա իրերի, ճանապարհորդության և այլ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար: Սպառողական վարկերը սովորաբար կարճաժամկետ են:

Դուք հավանաբար լսել եք այս վարկերի մասին. ավտովարկ կամ ուսանողական վարկ, դրանք նույնպես սպառողական վարկերի տեսակներ են, որոնք ունեն կոնկրետ նպատակ, այսինքն՝ նշվում է, թե ինչ նպատակով կարող է է վարկառուն օգտագործել վերցրած գումարը:

Ապառիկը նույնպես սպառողական վարկի տեսակ է, որը նույնպես ունի կոնկրետ նպատակ: Ապառիկ տրամադրելու ժամանակը համեմատաբար արագ է, և այն հաճախ տրվում է հենց առևտրի կենտրոնում (օրինակ՝ տեխնիկայի խանութում) կամ սպասարկման հաստատությունում (օրինակ՝ բժշկական կենտրոնում), որտեղ հաճախորդը ցանկանում է ինչ-որ բան ձեռք բերել:

Դա անելու համար վարկառուն պետք է վերլուծի իր և ընտանիքի եկամուտներն ու ծախսերը, հաշվարկի, թե ինչ գումար է մնում բոլոր անհրաժեշտ ծախսերը կատարելուց հետո:

Նկատի ունեցեք, որ ապառիկ գնումների ժամանակ սովորաբար ապրանքների և ծառայությունների գեՑնը ավելի բարձր են լինում, քան վճարային քարտով կամ կանխիկ միանվագ կերպով վճարելիս:

Վարկային քարտը բանկի կամ վարկային կազմակերպության կողմից թողարկված քարտ է, որի վրա սահմանված է այսպես կոչված վարկային սահմանաչափ:

Վարկային սահմանաչափն առավելագույն գումարն է (օրինակ՝ 1000 լարի), որը վարկային քարտ ունեցողը կարող է օգտագործել որպես վարկ՝ ցանկալի ապրանքները կամ ծառայությունները գնելու համար և՛ առցանց կերպով, և՛ տեղում՝ սպասարկման հաստատությունում:

Քանի որ վարկային քարտով տրամադրվող գումարը ևս վարկ է, հաճախորդը պետք է ամսական մարումներով վճարի ինչպես քարտից ծախսված գումարը, այնպես էլ տոկոսները: Սակայն վարկային քարտից օգտվելիս վարկառուին սովորաբար տրվում է որոշակի արտոնյալ ժամկետ, որի ընթացքում քարտից գումարը վերադարձնելու դեպքում նա ստիպված չի լինի տոկոսներ վճարել: Հաճախորդները կարող են նաև բանկումատից գումար հանել վարկային քարտով: Այնուամենայնիվ, դա կարող է առաջացնել համեմատաբար բարձր միջնորդավճարներ: Հաճախորդի համար ավելի հարմար է օգտագործել վարկային քարտը խանութում/առևտրային կենտրոնում կամ առցանց ապրանքներ կամ ծառայություններ գնելու համար:

Վարկային քարտը հարմար վարկային պրոդուկտ է, սակայն վարկի հեշտ հասանելիությունը (ամեն պահին ձեռքի տակ գումար ունենալը) կարող է դրդել ձեզ իմպուլսիվ գնումների: Ուստի վարկային քարտից օգտվելիս շատ կարևոր է, որ հաճախորդը հիշի, որ ինքն է ծախսում վարկով վերցրած գումարը, և որ նա պետք է ուշադիր հետևի իր գնումներին:

Օվերդրաֆտը կարճաժամկետ վարկային սահմանաչափ է, որը թույլատրվում է ունենալ ընթացիկ հաշվին: Այն սովորաբար «կապված» է աշխատավարձային քարտի հետ և թույլ է տալիս դրա տիրոջը օգտագործել ավելի շատ գումար, քան ունի իր հաշվին, իսկ հետո վճարել ծախսված գումարը աշխատավարձից կամ այլ եկամուտներից:

Օվերդրաֆտը և վարկային քարտերով ստացված վարկերը ևս վարկեր են, ուստի դրանցից օգտվելու դեպքում հաճախորդը բնականաբար պետք է տոկոսներ վճարի:

Օվերդրաֆտը շատ նման է վարկային քարտով ստացված վարկին, սակայն դրանց միջև կան նշանակալի տարբերություններ: Օրինակ՝ թույլատրվում է օվերդրաֆտ ստանալ այն հաշվին, որի վրա կուտակվում է վարկառուի աշխատավարձը, որպեսզի հեշտությամբ մարվի օվերդրաֆտի գումարը աշխատավարձից, իսկ վարկային քարտի դեպքում հատուկ այդ նպատակով կբացվի առանձին հաշիվ: Այնուամենայնիվ, ի տարբերություն վարկային քարտի, արտոնյալ ժամանակահատվածը, որի մասին մենք խոսեցինք վերևում, օվերդրաֆտի համար սովորաբար չի կիրառվում:

Հավանաբար լսել եք նաև հիփոթեքային վարկերի մասին: Հիփոթեքն օգտագործվում է անշարժ գույք գնելու, կառուցապատելու կամ վերանորոգելու համար, օրինակ՝ տուն, բնակարան կամ հողամաս: Հիփոթեքը սովորաբար ապահովվում է անշարժ գույքով, ինչը նշանակում է, որ եթե սպառողը չի կարողանում կամ չի ցանկանում մարել վարկը, ֆինանսական կազմակերպությունն իրավունք ունի վաճառել գրավադրված անշարժ գույքը կամ տիրապետել դրան: Հիփոթեքը սովորաբար երկարաժամկետ է. ժամկետը կարող է լինել 5, 10 և երբեմն 20 տարի: Հիփոթեքային վարկերը սովորաբար ունեն ավելի ցածր տոկոսադրույք և ավելի երկար մարման ժամկետներ, քան վարկերի



Ի՞նչ է վարկային պատմությունը:

Սա յուրաքանչյուր վարկառուի կողմից վերցրած վարկերի և դրանց մարման մասին տեղեկատվություն է: Վարկային պատմությունը հավաքագրվում և էլեկտրոնային եղանակով պահվում է մասնագիտացված կազմակերպության՝ Վարկային-տեղեկատվական բյուրոյի տվյալների բազայում, որը ցույց է տալիս, թե երբ և ինչ տեսակի վարկ է վերցրել յուրաքանչյուր վարկառու և արդյոք ժամանակին է մարում իր ֆինանսական պարտավորությունները: Նշենք, որ վարկային պատմությունը ներառում է տեղեկատվություն ոչ միայն հաճախորդի կողմից վերցված վարկերի, այլ նաև նրա, որպես երաշխավորի և համավարկառուի ստացված վարկերի մասին (երաշխիքի մասին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև): Բացի այդ, վարկային տեղեկատվական բյուրոյի տվյալների բազայում պահվում է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձանց (կամ ընկերությունների) վարկային պատմությունը:

Բանկերը, վարկային և այլ վարկատու կազմակերպությունները վարկառուի մասին տեղեկատվությամբ փոխանակում են Վարկային տեղեկատվական բյուրոյի հետ:

Վարկային պատմությունը շատ կարևոր է վարկ տրամադրող կազմակերպությունների համար, քանի որ այն ցույց է տալիս, թե արդյոք վարկառուն ժամանակին է մարել ֆինանսական պարտավորությունները: Երբ հաճախորդը գնում է ֆինանսական հաստատություն՝ վարկ ստանալու համար, այդ կազմակերպությունը հաճախորդի համաձայնության հիման վրա ստուգում է նրա վարկային պատմությունը, այնուհետև որոշում՝ վստահել հաճախորդին և գումար տրամադրել նրան, թե ոչ:

Ո՞վ է երաշխավորողը և ի՞նչ է նշանակում լինել երաշխավորող:

Երաշխավորն այն անձն է, ով պայմանագրով ստանձնում է այլ անձի կողմից վերցված վարկի մարման պատասխանատվությունը, եթե վարկառուն ինքը չի կարող դա անել: Երաշխավորը լրացուցիչ երաշխիք է վարկատու կազմակերպության համար: Եթե վարկառուն չի մարում իր անունով պարտավորությունը, ապա վարկառուն իրավունք ունի երաշխավորից պահանջել վճարումը: Երաշխավոր դառնալը մեծ պատասխանատվություն է ենթադրում: Ուստի, անձը, ով համաձայնում է լինել երաշխավոր, պետք է ուշադիր դիտարկի թե՛ վարկառուի, թե՛ սեփական ֆինանսական հնարավորությունները:

Ի վերջո, վարկ կարող ենք ստանալ ոչ միայն անհատապես, այլ նաև ուրիշների հետ միասին, օրինակ՝ ընտանիքի անդամի հետ: Այն անձը, ով հիմնականում վարկ է վերցնում և վճարում վարկառուի հետ, կոչվում է համավարկառու:

Հիշեք, որ պարտք վերցնելը շատ կարևոր և պատասխանատու որոշում է, և հարկավոր է լավ մտածել: Մեր օրերում վարկեր են տրամադրում բազմաթիվ ֆինանսական կազմակերպություններ՝ բանկեր, վարկային կազմակերպություններ և այլն: Յուրաքանչյուր հաճախորդի խնդիրն է իրականում գնահատել սեփական ֆինանսական հնարավորությունները և՛ վարկ վերցնելիս, և՛ վարկի ժամկետի ընթացքում, գտնել մանրամասն տեղեկատվություն վարկային առաջարկների մասին, համեմատել տարբեր առաջարկներ և կայացնել տեղեկացված, պատասխանատու որոշում:



Վերցրեք վարկը
պատասխանատվությամբ: